# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**26 օգոստոսի 2014 թվականի N 42-Ա**

**ԱԼԻՍԱ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ԽՈՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով, համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2014 թ. օգոստոսի 19-ի N 41-Ա կարգադրության, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1.2014թ օգոստոսի 26-ից «Խոտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել փոխտնօրեն Ալիսա Մինասյանին, կնքելով ժամանակավոր աշխատանքային պայմանագիր, մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացումը:

Հիմք՝ Ա.Մինասյանի անձնական դիմումը:

2.Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների գույքագրում և հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Ասրյան Աշոտ | Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի նախագահ) |
| Բալյան Իննա | Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ |
| Ծատրյան Արման | Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետ |
| Մինասյան Ալիսա | «Խոտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար (ընդունող) |
| Գրիգորյան Սևակ | «Խոտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ նախկին տնօրեն (հանձնող): |

3. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

4.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին, ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

***ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ*** ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

*2014թ. օգոստոսի 26*
*ք. Կապան*